ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Կրթության դերը ազգային արժեքների և ավանդույթների պահպանման գործում

Դպրոց՝ Ակունքի միջնակարգ դպրոց

Անցկացման վայր՝ Վարդենիսի ավագ դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Եղիազարյան Իրինա

Վարդենիս 2022թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գրական ակնարկ 4

Կրթության դերը ազգային հոգևոր- բարոյական արժեհամակարգի ձևավորման գործում 6

Կրթության դերը ազգային ավանդույթների պահպանման գործում.....9

Նորագույն մեթոդների ու հնարների կիրառումը ազգային գաղափարների ամրապնդման գործում.....13

Փորձարարական դաս 17

Վերջաբան 18

Գրականության ցանկ.....19

Հավելված

План упока в 8 класс 20

Ներածություն

Հետազոտական աշխատանքումս նկարագրել եմ կրթության դեր ազգային արժեքների և ավանդույթների պահպանման գործում: Փորձել եմ կապել ռուս և հայ ժողովուրդների մշակութային , ստեղծագործ կյանքը, տարիների ընթացքում կատարված փոփոխությունները կրթական ոլորտներում:

Տարբեր ժողովուրդների ավանդույթները, որոնք անմիջականորեն կապված են միմյանց հետ, ինչպես նաև անձի անհատի ձևավորմանը, զարգացմանը ինչպես նաև ինքնագնահատականի ամրապնդմանը: Ավանդույթները՝ մարդկանց միջև իրականում գործող բարոյական հարաբերություններն են:

Կրթությունը պետք է կազմակերպել բոլոր աշակերտների նկատմամբ լինի հավասարություն որպեսզի իրենք կարողանան իրենց զգալ երջանիկ, և արժանավայել կյանքի ձգտումներում արտահայտել մարդասիրական առաջընթացի միտումները, ինչպես նաև ձգտեն հասնեն իրենց նպատակներին:

Իհարկե հաշվի եմ առել նաև ընտանիք-դպրոց կապը, որպեսզի կրողանամ հասկանալ ընտանիքում գործող ավանդույթները և սովորույթները, ինչպիսի ազգային արժեքներ են գործում ընտանիքում:

Գրական ակնարկ

Կրթությունը, որպես անհատական և համամարդկային զարգացման հիմնական գործոն, անհրաժեշտաբար ենթարկվում է որոշակի փոփոխությունների, որոնք բխում են հասարակության պահանջմունքներից, ժամանակի թելադրանքից, գիտության զարգացման ընթացքից ու բովանդակությունից: Այս ամենի հետ մեկտեղ առաջանում է ազգային բարոյական նկարագիր, հոգեկերտվածքի, առանձնահատկությունների պահպանման ու սերնդեսերունդ փոխանցման անհրաժեշտություն:

ԽՍՀՄ-ի փլուզումից, ՀՀ նորանկախ պետականության կազմավորումից հետո կրթության բովանդակությունը, ինքնըստինքյան ենթարկվել է փոփոխությունների, քանզի անհրաժեշտ էր հստակեցում, թե ինչպիսի՞ հայեցակարգ ու գաղափարախոսություն, աշխարհայացք ու կենսակերպ ունեցող սերունդ ենք ակնկալում ունենալ հետագայում, որն է լինելու Հայաստանի անկախ պետականության կրողի գաղաափարական հիմքը. Ի՞նչ է նա ակնկալելու աշխարհից, և փոխադարձաբար, ի՞նչ է տալու աշխարհին: Ուստի կրթության բովանդակային փոփոխությունը մշտապես պետք է հանգեցնի ոչ միայն ազգային արժեքները ճանաչող, գնահատող, այլ նաև պահպանող և կատարելագործմամբ փոխանցող սերնդի կրթմանն ու դաստիարակմանը: Այս գործընթացի առաջնահերթության, իրականացման ընթացքի և առանձնահատկությունների քննարկման ու վերլուծության միջոցով սույն ուսումնասիրությամբ փորձ եմ արել գտնել միջոցներ անհրաժեշտ լուծման հասնելու համար:

Կրթական նորագույն մեթոդների կիրառումը լավագույնս նպաստում է ինչպես նպատակադրված հարցի արդյունավետ լուծմանը, այնպես էլ ուսուցման ընթացքը դարձնում է առավել մատչելի, գրավիչ, դյուրըմբռնելի: Նյութում քննարկված են մի շարք առաջնահերթություններ՝ կապված, ինչպես թեմայի յուրացման այնպես էլ արդյունավետ մեթոդների ընտրության և կիրառման հետ:

Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է սկսել կարևորագույն մեկնակետից, այն է՝ կրթությունը պետք է խարսխվի երկու հիմնական սյուների արժևորման վրա մշակույթ և ավանդույթներ:

Իմ հետազոտության նպատակն է պատասխանել 3 հիմնական հարցերի.

1. Ի՞նչ ենք հասկանում արժեքներ և ավանդույթներ ասելով
2. Ինչու՞ են դրանք կարևորվում:
3. Ինչպե՞ս կրթության միջոցով հասնել դրանց արմատավորմանն ու ամրապնդմանը:

Կրթության դերը ազգային հոգևոր-բարոյական արժեհամակարգի ձևավորման գործում

Կրթությունն, իր բովանդակությամբ, իրականացման տեխնոլոգիաներով, ձևերով ու մեթոդներով սերտորեն կապված է հասարակական զարգացման հիմնախնդիրների հետ: Լինելով սոցիալական ինստիտուտ, որը գործում է հասարակական, տնտեսական, սոցիալական, սոցիալ-քաղաքական, հոգևոր-բարոյական հարաբերությունների և այլ համակարգերում կրթությանը մասնակցում է դրանց կարգավորմանը և ապահովում թե առանձին մարդու և թե ողջ հասարակության կենսագործունեությունը: Հատկապես մեծ է նրա դերը մարդկանց գրագիտության բարձրացման, քաղաքակրթված լինելու, քաղաքացիականության կայացման գործում: Կենցաղային և հասարակական արժեքների փոփոխման, քաղաքական անտարբերության, ազգային մշակույթի անկումը կանխարգելելու և կրթության ձևականացման պարագայում հասարակության մի մասի կամ առանձին հասարակական խմբերի շրջանում ուժեղանում են կրթության և դաստիարակության ոլորտում արմատական դրական փոփոխությունների հասնելու տրամադրությունները:

Այսօր հասարակությունն ավելի շատ է գիտակցում, որ տնտեսությունն ինքնին զարգացման միջոցով չի կարող հանդիսանալ, եթե համարժեք կրթական ծրագրեր չդասավանդվեն համապատասխան մասնագիտությունների համար: Ցանկացած ոլորտի զարգացում պայմանավորված է գիտելիքների արդիակա-նացմամբ և նորերի ներդրմամբ: Այս ամենում իր որոշակի դերակատարումն ունի բարոյականությունը, ավանդույթները, վարքապահվածքը:

Քանի դեռ բարոյական նորմեր ու սկզբունքներն, արտացոլելով մարդկանց առօրյա գործողություններում, սահմանում են մարդկանց արժեքային կողմնորոշումներն ուսումնառության ընթացքում և աշխատանքում, արարքներում, վարքում, դրանք հանդիսանում են հասարակական կյանքի տարր:

Ավանդույթները՝ մարդկանց միջև իրականում գործող բարոյական հարաբերությունները, իրենց հիմքում ունեն հասարակության արտադրական, սոցիալ-քաղաքական, կենցաղային և մշակութային գործունեություն: Հենց ավանդույթներն են պայմանավորում բարոյականության կոպերը սոցիումի, հասարակության կյանքի տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր կողմերի հետ: Այս տեսանկյունից 6 կարևոր է սոցիալական կյանքի այնպիսի երևույթների փոխհարաբերությունների բնույթի ուսումնասիրությունը, ինչպիսիք են բարեգործությունը, գթությունը, կամավորական աշխատանքում ներգրավվածությունը և հասարակության հոգևոր զարգացումը: Հասարակության հոգևոր-բարոյական ինքնապահպանումը ձեռք է բերվում երբ փոխկապակցված գործողությունների՝ հոգևոր ժառանգության օգտագործման արդյունավետացման, դրանց պահպանման հանդեպ ցուցաբերած հոգատարության և

հնարավոր նորարարությունների, մշակույթի ավելի արդյունավետ ձևերի ստեղծագործական իմաստավորման որոնման արդյունքում:

Մշակույթը մարդկանց փոխհարաբերությունների կողմնորոշիչների, նմուշների, ձևերի, միջոցների, սոցիալական նորմերի և արժեքների՝ պատմականորեն ձևավորված ամբողջությունն է, որը մարդիկ մշակում են համատեղ կենսագործունեության արդյունքում՝ վերջինիս կատարելագործման և զարգացման, հասարակական առաջընթացի նպատակով: Մշակույթը կարող է լինել նյութական, հոգևոր և սոցիալական: Մենք կանգ ենք առնելու սոցիալ-կրթական մշակույթի վրա որն իրենից ներկայացնում է սոցիալական հանրույթների և և նրանց սերունդների հիշողությունը, պատմական փորձը՝ կրթական հարաբերությունների վերարտադ-րության և կրթական սուբյեկտների զարգացման,կրթական գործընթացում նրանց վարքի նորմերի,այս կամ այն պատամական պայմաններում նրանց փոխհարաբերությունների և շրջումների մակարդակում: Արդի պայմաններում աճում է համամարդկային այնպիսի արժեքների կարևորությունը,ինչպիսին են կյանքի իրավունքը, ազատությունը, արդարությունը, խիղճը, արժանապատվությունը, պարտքը, բարոյականության նորմերը և այլն: Անհրաժեշտ է աշակերտներին հասու դարցնել այն միտքը, որ ելնելով կոնկրետ հասարակության և սոցիալական խմբերի պատշաճ և էական բարոյախոսական հարաբերակցությունից, կարելի է դատել նրա բարոյական առողջության մասին: Իզուր չէ, որ Արիստոտելը «բարոյագիտություն» հասկացությունն օգտագործել է բնորոշելու համար գիտելիքների այն ասպարեզը, որն ուսումնասիրում է առաքինությունը: Ըստ նրա՝ այդ գիտության նպատակն է սովորեցնել մարդուն ոչ միայն, թե ինչպես դառնա առաքինի, այլև՝ սահմանափակել եսասիրական պահանջմունքները և սեփական գործունեությունն ուղղել ի շահ հասարակության:

Ուստի ուսուցչի դերը կայանում է նաև նրանում, որ նա պետք է ուսուցանի և դաստիարակի աշակերտների մեջ «ես»-ի մտածողությունը փոխարինել «մենք»-ով: Իսկ դրան հասնելու լավագույն ճանապարհը վարքագծային ճիշտ ուղենիշ տալն է, քանզի վարքը մարդու արարքների ամբողջությունն է, որն ունի բարոյական արժեք:

Հիշենք XVIII դարի վերջի լորդ Չեստերֆիլդի նշանակալից «Նամակ որդուն» ստեղծագործությունը, որում նա որդուն գրում է. «Գիտելիքն ու խելքն առաջին ամենաանհրաժեշտ պայմաններն են, որպեսզի հավանության արժանանաս հասարակության մեջ, սակայն դրանք բավարար չեն, որպեսզի այդ հատկանիշներն անհրաժեշտ մակարդակով գնահատվեն, դրանք պետք է միանան զգուշավորությունը և վարքագիծը: Մ՛ինգամայն անհրաժեշտ է և պետք է կարողանալ ոչ միայն սիրալիր լինել, այլև բարեկրթության վեհ կանոնները պահանջում են որպեսզի քո սիրալիրությունը լինի ինքնըստինքյան, ո՛չ՝ ստիպողաբար»:

Կրթությունը պետք է կազմակերպել՝ մշտապես հիշելով, որ բարոյականությունը հասարակական գիտակցության ձև է, և հասարակական հարաբերությունների տեսակ՝ ուղղված անձի ինքնագնահատականի ամրապնդմանը, բոլոր մարդկանց հավասարությանը՝ իրենք երջանիկ և արժանավայել կյանքի ձգտումներում արտահայտելով մարդասիրական առաջընթացի միտումները:

Կրթության դերը ազգային ավանդույթների պահպանման գործում

Ընտանեկան հարաբերություններից մինչև ծիսական ավանդույթներ ու սովորույթներ, տարեցների ու երիտասարդների հարաբերություններից մինչև արժանապատիվ քաղաքացի ... այս բոլորի համատեղումը խելամիտ ձևով կատարելու, գիտելիքը կիրառելի հմտության վերածելու դեպքում հնարավոր կլինի կրթության դերն արժևորել ՝համարելով, որ այն իրականացրել է իր ամենակարևոր գործառույթը՝հայ մարդու, քաղաքացու, նվիրյալ զավակի, ավանդապահ ապագա ծնողի կերտումը:

Հայտնի արտահայտությունն ասում է.« Ամեն ինչ սկսվում է ընտանիքից »: Անշուշտ,այդպես է: Ընտանիքը սոսկ մարդկային հանրույթի մի ձև չէ, որտեղ անդամները կապված են արյունակցությամբ ու ընդհանուր կենցաղով, այլ նաև՝ փոխադարձ կապվածության ու պատասխանատվության մի ուրույն շրջանակ: Այստեղ դրվում է մարդու դաստիարակության հիմնաքարը: Գենետիկ առաջնահերթությունները, որոնք անհերքելի մեծ դերակատարություն ունեն ընտանիքում, մենք քննարկման առարկա չենք դարձնի ,քանզի մեծապես կենտրոնանալու ենք կրթության դերի ու բովանդակության վրա :

Ինչու՞մն է կրթության դերակատարությունը ավանդույթների, ազգային արժեք–ների պահպանման և նոր սերնդի ճիշտ դաստիարակության գործում: Իսկ ի՞նչ է տալիս և պարտավոր տալ ընտանիքը: Որտե՞ղ են հատվում ընտանիքի և դպրոցի գործունեության սահմանները այս հարցերի լուծման ընթացքում: Այս հարցերը մշտապես մտահոգել և մտահոգում են զարգացող հասարակություններին: Ժողովրդական խրատն ասում է. << Ջանքեր մի՛ գործադրեք դաստիարակելու ձեր երեխաներին, նրանք,միևնույն է, ձեզ են նմանվելու >>: Իսկապես, ընտանիքում ծնողների սեփական կենսաձևն է լավագույն օրինակը դաստիարակելու համար:Այն առավել խոսուն է ու համոզիչ,քան օրերով տրվող բանավոր խրատները ու խորհուրդները, քանզի զավակները, ի վերջո ծնողներին հիշելու են կատարած գործերով, ստեղծած արժեքներով:

Հայ ընտանիքում առաձնային է կնոջ դերը, մոր իդեալականացված կերպարը: Իզուր չէ, որ ժողովուրդների բարոյական նկարագրի, ընտանիքի ու հասարակության մասին պատկերացում կազմելու լավագույն միջոցը այդ ժողովուրդների մեջ մոր կերպարի, դերի բացահայտումն է: Ռ.Բերբերյանն իր՝ «Կնոջ պատմությունը» աշխատության մեջ գրում է. « Կանանց պատմությունը միշտ սերտորեն կապված է այն հասարակության վիճակի հետ,որում նրանք ապրում են:Կինը ժամանակակից հասարակության արտացոլումն է, և նրա համար միշտ պատասխանատու է հասարակությունը: »

Ահա այս վերջին մտքում է բանալին ...Հասարակություն–ընտանիք–երջանիկ անհատ՝ սա է այն շղթան,որի յուրաքանչյուր մասից կախված է ամբողջի գոյութենական վիճակն ու գործունեությունը: Ընտանիքից դեպի հասարակություն անցումն իրականացվում է անհատի ՝ դեպի դպրոց կատարվող առաջին քայլով: Ահա այստեղ է,որ պետք է ուշադիր հետևել վերոնշյալ շղթայի ամրությանն ու հուսալիությանը:Կարևոր է,որ գաղափարական տարանջատում չլինի ընտանիքում տեսածի ու լսածի և դպրոցում ուսուցանվող կենսական գաղափարների միջև: Կրթության գաղափարական հարմարեցումը պետք է բխի համընդհանուր սկզբունքներից, երկրի որդեգրած բարոյական ուղղությունից, հասարակական զարգացման միտվածությունից ու նրա կենսաձևից: Այստեղ զգուշավորությունից բացի,անհրաժեշտ է,որ ուսուցիչն հանդես բերի մտքի ճկունություն,ուսուցանման ձևերի ճիշտ ընտրություն,հնարների արդյունավետ կիրառում:

Ավանդույթների փոխանցումն իր հիմքում ազգագրական նկարագրի պահպանմանն է միտված: « Անցյալի չիմացությունը ոչ միայն խանգարում է ներկայի ճանաչմանն ու կայացմանը, այլև վտանգի տակ է դնում ներկայում գործելու ցանկացած փորձ »,– գրում է ֆրանսիացի պատմաբան Մարկ Բլոկը: Ավանդույթների պահպանման կարևորագույն ձևերից (հատկապես գյուղական կամ փոքր քաղաքային բնակավայրերում) հանդիսանում է աշխատանքային ավանդույթի փոխանցումը:Այն ավագ սերնդի զբաղմունքի,շատ հաճախ և մեծապես արհեստի ուսուցանումն է երիտասարդ սերնդին:Այս հարցում ևս հսկայական դեր ունի դպրոցը.այն իր գործունեությամբ ոչ միայն պետք է նպաստի այդ արհեստների 10 արժևորմանը,այլ նաև սեր արթնացնի դրանց հանդեպ և հարգանք՝դրանցով զբաղվող ավագ սերնդի հանդեպ:

Այսպիսի դաստիարակության լավագույն ձևը,անկասկած,կարող է լինել այցելությունը ժողովրդական արվեստի այնպիսի թանգարաններ, ինչպիսին, օրինակ, Գյումրիում գործող «Ջիթողցոնց տունթանգարան »–ն է: Այստեղ ցուցադրվող արհեստի ու արվեստի նմուշներն ուղղակի առինքնում են դիտողներին՝անկախ նրանց տարիքից ու հետաքրքրությունների շրջանակից: Սրանում մեկ անգամ ևս համոզվեցի վերջերս՝ աշակերտների խմբի հետ թանգարան կատարած այցի ժամանակ: Այդ փոքրիկ աչքերի պրպտուն ,հոտաքրքրությամբ լի հայացքերը, ամեն ինչ միանգամից իմանալու ցանկությունն ու ամեն նմուշի հանդեպ զգուշավոր,երկյուղած մոտեցումն ու վերաբերմունքը այնքա՜ն խոսուն էին ու տպավորիչ ...Սա անցյալը, իրենց նախնիներին ,սեփական երկիրն ու ժողովրդին ճանաչելու լավագույն միջոց է, անկասկած, նաև ՝այլոց ստեղծած արժեքներով հիանալու,դրանք ըստ արժանվույն գնահատելու և վերջապես,այս ամենի միջոցով հայրենիքը առավել ևս սիրելու լավագույն միջոցն է:

Փորձը ցույց է տալիս, որ հաճախակի կատարված այցելությունները նմանատիպ թանգարաններ, աշակերտներին տալիս են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ, այլ նաև նպաստում են ներկայի

ձեռքբերումների,այսօրվա կացութաձևի, իրենց ունեցածի վերաարժևորմանն ու գնահատմանը: Նրանք ճանաչում են նախնիներին, և այդ ճանաչողությունն արտահայտում նրանց գործի հանդեպ ունեցած հիացմունքով, հանախ՝ զարմանքով :Այստեղ արդեն կարելի է ասել, որ առաջին , կարևոր քայլն արված է: Ինքնաճանաչողությամբ այդուհետ ճանապարհ է հարթվելու դեպի աշխարհաճանաչողություն.... Ազգային նկարագրի պահպանման անհերքելի մեծագույն դերն ունի Հայոց եկեղեցին: Մարդու բարոյական նկարագրի, արժեհամակարգի, հայ մարդու համար ընդօրինակելի կերպարի լավագույն օրինակ է Ներսես Մեծ կաթողիկոսը: Փ.Բուզանդն այնքան տպավորիչ է նկարագրում հայոց կաթողիկոսին՝ կարծես դրանով իսկ տալով ճշմարիտ հայ լինելու բանաձևը. «խոնարհ, աշխատասեր ... ամուսնական կյանքում՝ օրինավոր»:

Առաքինությունների այս ամբողջ շարքը սրբակենցաղ վարք սերմանելուց զատ, նպատակ ուներ ամենից առաջ ամուր պահել հայ ընտանիքը: Բարոյական դաստիարակության հենքում Հայոց եկեղեցին մշտապես դիտել և դիտում է ընտանեկան սիրո վրա խարսխված երջանկությունը: Երջանիկ լինելու իր բանաձևն է տալիս Էպիկուրը, ում տեսակետը, բնավ չի հակասում կրոնական բարոյականու–թյանը: Այն պետք է վերլուծել նրբանկատորեն: Էպիկուրն ասում էր, որ չի կարելի գեղեցիկ ապրել՝ առանց արդարացի և բանականորեն ապրելու:Էպիկուրի պնդմամբ, երբ ինքն ասում է, որ կյանքի նպատակը հաճույքն է, բնավ էլ նկատի չունի զգայական հաճույքը , այլ՝ «...զերծ մնալը մարմնական պառապանքներից և հոգեկան հուզմունքներից...»: Այս ամենին հասնելու լավագույն ուղին հայոց մեծերն համարում էին կիրթ լինելը: Կրթվածությունը նաև ապրելակերպ էր ,ինքնադրսևորման ձև: Կիրակոս Գանձակեցին 1 նախադասությամբ ՝ նվիրված Ներսես Դ Տայեցի կաթողիկոսին, ցույց է տալիս կիրթ մարդու հանդեպ հասարակության վերաբերմունքը. « Ինչպես լսեցինք,այնպես էլ տեսանք. », այսպես են բնութագրում ասորի և հույն իմաստունները Ներսես Շնորհալուն:.

Անցյալի մեծերի օրինակով սերմանվող դաստիարակության ու ավանդապահ վարքի սերմերն, անկասկած, առավել ամուր արմատներ են գցում մայր հողում: Հարկ է նշել «հայրենիք» հասկացության իրական բովանդակությունը...Ինչու՞ է հող հայրենին այդպես կապում մեզ իրեն, ո՞րն է նրա ուժի գաղտնիքը: Դիմենք լեզվագիտության օգնությանը: Պարզվում է,որ «հայրենիք» բառը կազմված է 2 արմատներից՝ «հայր» ,որն այս դեպքում նշանակում է «նախնիներ», և՝ « ենիք», որն իր հնագույն հնդեվրոպական ծագմամբ մեկնաբանվում է ,որպես «մարմին»: Այլ կերպ ասած՝ հայրենիքը հող դարձած մեր նախնիների մարմիններն են,ովքեր իրենց ուժն ու զորությունն են փոխանցում մեզ՝ վերածվելով անքացատրելի, առնչնող կապի ՝հայ մարդու և հայրենի հողի միջև: Այս գաղափարով դաստիարակվող հայ մարդու գիտակցության մեջ արմատավորված կլինի նախնիների հանդեպ պարտքն ու երկրի ամրությունն ապահովելու պարտականությունը:

Նորագույն մեթոդների ու հնարների կիրառումը ազգային գաղափարների ամրապնդման գործում:

Հայ ազգային մշակույթը մշտապես հանդես է եկել ավանդական, սովորութային նորմերն ու բարոյական արժեքները պահպանելու և վերարտադրելու, ազգային ինքնության վերաբերյալ գիտակցությունը փոխանցելու ,կենցաղավարության և մարդկային փոխհարաբերությունների տարբեր ձևերի բազմազանության տոսմով Անհրաժեշտ է պատմական գիտելիքներին զուգահեռ աշակերտներին սերմանել կարևորագույն մի գաղափար ,որ ժողովուրդը ազգ է դառնում,երբ ստեղծում է ազգային մշակույթ, իսկ այն նաև նպաստում է այլ ժողովուրդների հետ մտնեն մշակութային երկխոսության մեջ: Մշակույթին վերաբերող թեմաների մատուցումը , հատկապես 6-7-րդ դասարաններում, արդյունավետ կարող է լինել «Պրիզմա» մեթոդի կիրառմամբ:

Օրինակ՝



Որպես մշակույթի են[illegible]ոլորտները, ապա առավել մանրամասնել դրանք նեղացնելով շրջանակը և վերջո հասնելով այնպիսի բնութագրիչի, որ կմեկնաբանի և հոմանիշ կլինի «մշակույթ» հասկացությանը:

Այս մեթոդի կիրառումը նպաստում է համակողմանի գիտելիքներ ձեռք բերել ինչպես մշակույթի մասին ընդհանրապես այնպես էլ առանձին ոլորտների մասին մասնավորապես: Այն միաժամանակ լավ տպավորվում է, նպաստում է վերլուծություն կատարելու ընթացքի դյուրացմանը:Ավելի բարձր դասարաններում ազգային արժեհամակարգը բնութագրող հասկացություններն ամրապնդելու համար արդյունավետ է «Փաստերի բուրգը»-ի կիրառումը ներառելով հայրենասիրությունը, ազգասիրությունը, անձնազոհությունը, քրիստոնեական արժեհամակարգի մեջ ազատությունը, անկախությունն ու պետականությունը:

Ցանկալի է բուրգը բաժանել 3 հիմնական մասերի .

1.Գլխավոր կամ առաջնային բնութագրիչներ, որոնք ըստ աշակերտների, առավել կարևոր արժեքներ են:

2.Հենքային կամ հենարան հանդիսացող արժեքներ, որոնք ամրապնդում են գլխավոր արժեքների կայացումը:

3.Օժանդակող բնութագրիչներ որոնք կարող են լինել ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային նշանակության:

Այս մեթոդի կիրառման վերլուծությունը ցույց է տալիս, որ այն նպաստում է բոլոր անգամ ամենապասիվ աշակերտների ներգրավածությանը, խթանում է մտածողության ակտիվացման ու մղում քննարկումների, վերլուծությունների արդյունքում հասնել որոշակի ընդհանուր եզրահանգումների լրացնելով բուրգի 3 ենթամասերը: Ուստի այս մեթոդը նաև համագործակցային աշխատանքը խթանելու լավգույն միջոց է:

Հայրենասիրությանը, ազգային հաղթանակին և պետականությանը վերաբերող թեմաների ամրապնդումը արդյունվետորեն կարող են իրականացվել «Քառաբաժան» -ի միջոցով 4 կարևորագույն հարցադրումներին տրվելիք պատասխանների ամփոփմամբ:

Ինչն է բնութագրվում տվյալ ազգին տարբերելով մյուսից	Դրանցից որոնք են ձեր կարծիքով առավել կարևոր
Բերեք մեկ փաստարկ ապացուցելու համար այդ կարևորությունը	Արժեքներից որի կրողն եք համարում ձեզ առավելագույն չափով

Այս հարցերի պատասխաններն,ինքնին,կմղեն աշակերտներին ոչ միայն խորհել ազգային բարոյական արժեքների, ավանդույթների մասին, ընդհանրապես, այլ վերլուծել, թե դրանցից որո՞նք են առավել կարևոր, առաջնային և ինչու՞: Անհրաժեշտ է հասնել պատասխանների հիմնավորմանը:Հասակակիցների կարծիքների ու տեսակետների հիմնավորված վերլուծությունը,շատ հաճախ ,առավել տպավորիչ ու համոզիչ կարող են լինել: Ցանկացած թեմայի վերլուծությունը պետք է հասցնել մինչև ներկա ժամանակներ, կապել գործող իրականության հետ, դիտարկել բոլոր տեսանկյուններից՝ հնրավորինս արդիականացնելով այն: Բարձր դասարաններում վարչակարգային փոփոխություններին վերաբերող թեմաների ուսումնասիրման ժամանակ

հարկավոր է քաղաքական հարցերի վերլուծությանը զուգահեռ քննարկման առարկա դարձնել նաև բարոյա-հոգեբանական վիճակի, հասարակական մտածողության փոփոխությունները: Այս դեպքում ազգային մտածողության, արժեքների, ապրելակերպի փոփոխության մասին համապարփակ տեղեկություն ստանալու լավագույն մեթոդը «Պատմական փոփոխությունների շրջան»-ի կիրառումն է:

Այս մեթոդը մի յուրօրինակ պատմական էքսկուրս է դառնում, այն մտովի տեղափոխում է աշակերտներին դիտարկվող պատմական ժամանակաշրջան, մասնակից դարձնում նրանց դեպքերի ընթացքին, հնարավորություն է տալիս վերլուծել, թե ի՞նչն է ճիշտ արվել, իսկ ի՞նչը՝ոչ, կամ կցանկանա՞ր, արդյոք, ինքը փոփոխել դեպքերի ընթացքը, եթե՝ այո, ապա ինչպե՞ս էր այն իրականացնելու: Այս մեթոդի կիրառումը մշտապես ընթանում է բանավեճերի, բուռն քննարկումների մթնոլորտում, բայց այն նաև շատ հարցերի լավագույն լուծման հանգելու միջոց է դառնում՝ խթանելով ակտիվ ներգրավածությանը:

Ի վերջո, արժեհամակարգի ձևավորման և ամրապնդման լավագույն միջոցը խոսքից գործի անցնելու ճանապարհն է: Պետք է սեփական օրինակով սովորեցնել սիրել հայրենիքը ոչ միայն խոսքով, այլ նաև՝ օգտակար լինելու, հոգատարություն դրսևորելու, շենացնելու, զարգացմանը , թեկուզ փոքրիկ նպաստ բերելու գործով: Ընտանեկան հարաբերություններից մինչև ծիսական ավանդույթներ ու սովորույթներ, տարեցների ու երիտասարդների հարաբերություններից մինչև արժանապատիվ քաղաքացի ... այս բոլորի համատեղումը խելամիտ ձևով կատարելու, գիտելիքը կիրառելի հմտության վերածելու դեպքում հնարավոր կլինի կրթության դերն արժևորել ՝ համարելով, որ այն իրականացրել է իր ամենակարևոր գործառույթը՝ հայ մարդու, քաղաքացու, նվիրյալ զավակի , ավանդապահ ապագա ծնողի կերտումը:

Փորձարարական դաս

Խմբի նկարագիրը

Փորձարարական դասը անցկացրել եմ 8-րդ դասարանում: Դասարանը բաղկացած է 22 աշակերտից, 8 տղա և 14 աղջիկ: Դասը անցկացրեցի խմբային աշխատանքի օգնությամբ: Դասի սկզբում կատարեցի ներկա-բացակա, շարունակցեի էլեկտրոնային մատյանի գրանցմամբ:

Այնուհետև կատարեցինք խմբերի բաժանում ամեն մեկը՝ աշակերտները, մեկ բառ ասեցին միավանկ, երկվանկ և այլն, և ըստ այդմ կազմեցին խմբեր: Խմբերը պատրաստվեցի, դասը ամեն մի խումբ ներկայացրեց Power Point (համակարգչային ցուցադրումներ) ծրագրի օգնությամբ, գեղեցիկ և մատչելի ձևով ներկայացրեցին իրենց իսկ պատրաստված սահիկները: Պատմեցին դասը, ստացան իրենց համապատասխան գնահատականները: Յուրաքանչյուր խումբ փորձում էր իր դասը ավելի գեղեցիկ ներկայացնել:

Վերջում հանձնարարվեց տնային աշխատանքը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ուսուցման արդյունավետությունը պահանջում է խելամիտ գործունեության ծրագիր և ընտրված մեթոդներ, ինչպես նաև՝ սեր ու համբերատարություն, դժվարութ-յուններն հաղթահարելու կամք: Թեմայի ընտրությունը կատարելիս առաջնորդվել եմ իմ իսկ կյանքում տեղի ունեցած փոփոխություններով, իմ սերնդակիցների կրթության բովանդակության վրա դրանց թողած ազդեցություններով: Երբ դպրոցում սկսեցի ծանոթանալ «Պատմություն»առարկային, մեր երկիրը դեռևս Խորհրդային Միության անդամ երկիր էր,ուստի իմ հուշերում ամրագրված մեր պատմության դասերը մեծապես, գրեթե առանց բացառությունների, զուտ պատմողական բնույթի էին:Մեզ տրվող գիտելիքները, մի տեսակ դոգմատիկ , հաստատուն բնույթով էին մատուցվում՝առանց անձնական հայեցողության ու վերլուծության հնարավորության: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո,թեև որոշակի փոփոխություններ նկատվեցին կրթության բովանդակության մեջ, բայց դրանք առաջին, երերուն քայլերն էին միայն:

Չնայած այս ամենին անհրաժեշտ է Պատմություն առարկայի հետ սերտորեն կապել ռուս ժողովրդի պատմությունը, Ռուսաց լեզվի դասաժամերին ստեղծելով միջառարկայական կապեր:

Մտածող, վերլուծող, գնահատող, հաճախ նաև ՝ բանավիճող ու անհամաձայ-նություն արտահայտող աշակերտի կերպարին հասնելու համար բազում կարծրա-տիպեր հաղթահարելու անհրաժեշտությունն անհերքելի էր: Թերևս, անցյալի մշտար-թուն տպավորությունն էր նաև պատճառը, որ հետագայում, համոզված որոշում կայացրեցի՝ տալ իմ աշակերտների կրթության բովանդակային այն ազատությունը,որը ժամանակին պատկերացնում էի ինքս: Այսպիսով, իմ նպատակաուղղված քայլերը միտված են կրթել հասարակության այնպիսի անդամի, ով ոչ թե կլինի ամենին ու ամեն ինչին լուռ համաձայնությամբ հետևող,այլև՝ սեփական կարծիքն ու տեսակետն հիմնավոր,խելամիտ ձևով ներկայացնող, անհրաժեշտության դեպքում նաև ինքնաքննադատության ունակ ու սեփական սխալների համար պատասխանատու սերունդ:

Հուսով եմ,որ մի օր իմ գործունեության արդյունքը կդառնա ժամանակով ապացուցված ճշմարտություն...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Յուրի Գասպարյան՝ «Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում»

2.«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան ,Երևան 2002

3. Փ. Բուզանդ՝ <Պատմություն Հայոց> ,Երևան 1968

4. «Ռուսաց լեզու» 8-րդ դասարան դասագիրք

Հավելված

План урока в 8 классе

Тема урока:- А. Платонов. «Неизвестный цветок»

Цели урока:-

Образовательные: -ознакомить с биографией и творчеством А. Платонова; провести идейно-художественный анализ сказки- были; определить основную мысль сказки.

Развивающие: - вызвать желание обсудить прочитанное; выработать умение развивать свои мысли посредством беседы, диспута, ответов на вопросы, выражать логическое отношение к происходящему.

Воспитательные: -углубить представление учащихся о вечных, непреходящих ценностях человека; воспитывать нравственные качества и подвести учащихся к осознанию того, как важно быть внимательным к окружающему миру, как необходимы каждому человеку понимание и сердечная доброта,как,преодолевая трудности, человек становится выносливее, терпеливее.

Планируемые результаты урока:
Личностные:
- умение выслушать собеседника;
- умение строить высказывания;
- умение извлекать информацию из различных источников;

Предметные:
- понимать смысл заглавия текста;
- аргументированно высказывать своё отношение к прочитанному .

Методы обучения: -кейс, кластер.
Форма работы: - групповая.

Оснащение: презентация, раздаточный материал,видео

Ход урока:

1.Организационный момент.

2.Стадия вызова.

Вступительное слово учителя:
--эпиграфы к уроку-формулирование тематики урока

Раздача материалов (работа в группах)
1 гр.—биография писателя,история создания сказки-были, отличительные признаки сказки и были (**слайд**)

2 гр.-«тонкие»вопросы (по тексту).

3 гр.- «толстые»вопросы (по тексту)
4 гр.-работа с текстом (заполнить таблицу), объяснить значение выражений из текста

5 гр.- создать кластер «цветок» и обосновать выбор слов 6 гр.-изобразить цветок (раскрасить,нарисовать)

3. Стадия осмысления.

1.Видео (краткий пересказ произведения**)**

2.Группы представляют свои ответы.(**слайды)**

3.Общие вопросы по произведению.

Постановка проблемного вопроса **:**

Что хотел сказать своему читателю А. Платонов этойсказкой**? (слайд)**

4.*Подведение итогов урока. Рефлексия.*

1.Заключительное слово учителя

2.Закончить предложения («Незаконченное предложение») (**слайд)**

3.*Домашнее задание*:рассказ текста от лица Даши (или цветка**).**